

**Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրեր \$S 2018.
Դրամաշնորհային աջակցության պայմանագրերի ստորագրման
արարողությունները Գյումրիում**

2019 թ. մարտի 7-ին ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան մասնակցեց Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (\$S 2018) համար դրամաշնորհային աջակցության երեք պայմանագրերի ստորագրման արարողությանը Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանում, որը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածում: Դեսպան Յամադայից բացի արարողությանը ներկա էին Գյումրու քաղաքապետ պարոն Սամվել Բալասանյանը, ինչպես նաև երեք շահառու կազմակերպությունների ներկայացուցիչները և անդամները, և այլն:

Առաջին հերթին, դեսպան Յամադան և Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Միքայել Աջապահյանը ստորագրեցին «Գյումրիում գործազուրկների համար սոցիալ-կրթական կենտրոնի բարելավման ծրագրի» դրամաշնորհային պայմանագիրը (26,923 ԱՄՆ դոլար (3,015,376 ճապոնական իեն)):

Ծրագրի նպատակն է վերականգնել և վերանորոգել Գյումրիի սոցիալ-կրթական կենտրոնի շենքը, որն ապահովում է գործազուրկներին մասնագիտական վերապատրաստում, և տեղադրել անհրաժեշտ սարքավորումներ: Ակնկալվում է բարձրացնել դասընթացի մասնակիցների ներկայիս թիվը 70-ից մինչև 105-ը և նպաստել գործազուրկների և խոցելի տղամարդկանց և կանանց ներգրավվածությանը սոցիալական կյանքին: Ուսումնական ծրագրի հիման վրա վերապատրաստվելուց հետո մասնակիցների 30%-ը կաշխատի կամ սեփական բիզնես կսկսի:

Երկրորդ հերթին, դեսպան Յամադան և «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ տիկին Նարինե Սարգսյանը ստորագրեցին «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական

ուսումնարանին դպրոցական գույքի տրամադրման ծրագրի» դրամաշնորհային պայմանագիրը (77,185 ԱՄՆ դոլար (8,644,720 ճապոնական իեն): Դպրոցը ներկայումս ունի մասնագիտական կրթություն ստացող ամենաշատ թվով ուսանողներ այս մարզում և 246 աշակերտի տրամադրում է երեք տիպի դասընթացներ, ինչպիսիք են վարսահարդարությունը, խոհարարությունը և կարը: Մյուս կողմից, քանի որ դպրոցի գույքը օգտագործվել է Խորհրդային Միության ժամակաշրջանից սկսած, դրա մեծ մասը կոտրված, սպառված կամ անհայտ կորած է: Հետևաբար, ծրագիրը նպատակ ունի տրամադրել նոր և թարմացնել առկա գույքը դպրոցում, և ակնկալվում է բարելավել 246 ուսանողի ուսումնական և 58 ուսուցչի աշխատանքային միջավայրի պայմանները:

Եվ վերջապես, դեսպան Յամադան և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն պարոն Գագիկ Տարասյանը ստորագրեցին «Գյումրիում և Տաշիրում տարեցների համար ցերեկային խնամքի կենտրոնների վերականգնման ծրագրի» դրամաշնորհային պայմանագիրը (21,634 ԱՄՆ դոլար (2,423,008 ճապոնական իեն): Երկու կենտրոններն էլ տեղական համայնքներում վճռական դեր ունեն, քանի որ ընդունել և խնամել են ծայրահեղ աղքատ միայնակ տարեցների և ապահովել նրանց սննդի, բժշկական ստուգման, լրգանքի և լվացքի սոցիալական ծառայություններով: Այնուամենայնիվ, քանի որ դրանք կառուցվել են մոտավորապես 30 տարի առաջ, մտահոգիչ է, որ երկու կենտրոններն ունեն հարմարությունների քայքայման և սարքավորումների վնասման վտանգ, ինչը կարող է հանգեցնել օգտագործողների անվտանգության և սանիտարական խնդիրների: Ծրագրի նպատակն է վերականգնել և վերանորոգել կենտրոնների երկու շենքերը: Այն նաև փոխարինելու է երկարատև օգտագործված և հնացած սարքավորումները, մասնավորապես անվասայլակները և աջակցող միջոցները, նոր գույքով՝ նպաստելով տարեցներին առողջապահական ծառայությունների մատուցման բարելավմանը: Ակնկալվում է բարելավել

Կենտրոնների 110 տարեցների կենսական, ինչպես նաև անձնակազմի աշխատանքային միջավայրի պայմանները:



Դեսպան Յամադան հանդիպեց Գյումրիի քաղաքապետ պարոն Սամվել Բալասանյանի հետ



Դեսպան Յամադան և Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Միքայել Աջապահյանը փոխանակեցին պայմանագրերը



«Ապագան քոնն է» կազմակերպության նախագահ տիկին Նարինե Սարգսյանի շնորհակալական ելույթը



Դեսպան Յամադայի և «Հայկական Կարիտաս»-ի գործադիր տնօրեն պարոն Գագիկ Տարասյանի ձեռքսեղմումը պայմանագիրը ստորագրելուց հետո